

Նպատակ 17: Ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման

Կայուն զարգացման օրակարգի հաջող իրականացման համար անհրաժեշտ է համագործակցություն կառավարությունների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև: Գլոբալ, տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում անհրաժեշտ է սկզբունքների և արժեքների վրա հիմնված ներառական համագործակցություն, ընդհանուր տեսլական և ընդհանուր նպատակներ, որոնց առանցքում մարդն է և մոլորակը:

Անհրաժեշտ է ձեռնարկել հրատապ քայլեր՝ մոբիլիզացնելու, վերաուղղորդելու և ազատ արձակելու մասնավոր ռեսուրսների հազարավոր միլիարդ դոլարների վերափոխիչ ուժը՝ կայուն զարգացման նպատակներն իրագործելու համար: Կարևոր ոլորտներում, հատկապես զարգացող երկրներում, անհրաժեշտ են երկարատև ներդրումներ, ներառյալ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ: Սրանք ներառում են կայուն էներգիան, ենթակառուցվածքներն ու տրանսպորտը, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները: Հարկ կլինի, որ պետական հատվածը որդեգրի հստակ ուղղություն: Ներդրումներ ներգրավելու և կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ է վերամշակել դիտարկման և մոնիտորինգի շրջանակներ, կարգավորումներ ու խթանող կառուցվածքներ, որոնք նպաստավոր պայմաններ կստեղծեն նման ներդրումների համար: Անհրաժեշտ է ամրապնդել ազգային վերահսկողական մեխանիզմները, ինչպիսիք են աուդիտի բարձրագույն հաստատությունները և օրենսդիր մարմնի վերահսկողական գործառույթները:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՆՉՈՒ ԵՆ ԴՐԱՆՔ ԿԱՐԵՎՈՐ

«Կայուն զարգացման 2030 օրակարգը հաջողությամբ իրագործելու համար մենք պետք է արագորեն հանձնառություններից անցում կատարենք գործողության: Դա անելու համար մեզ անհրաժեշտ է բոլոր մակարդակներում ամուր, ներառական, ինտեգրված համագործակցություն»: Բան Կի-մուն

Ո՞րն է նպատակը

Ակտիվացնել գլոբալ գործընկերությունները՝ հանուն կայուն զարգացման:

Ինչո՞ւ

2015 թվականին համաշխարհային առաջնորդներն ընդունել են Կայուն զարգացման 2030 օրակարգը, որի նպատակն է վերացնել աղքատությունը, լուծել անհավասարության խնդիրը և պայքարել կլիմայի փոփոխության դեմ: Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ են բոլորի՝ կառավարությունների, քաղաքացիական հասարակության, գիտակրթական և մասնավոր հատվածների համախմբված ջանքերը:

Ինչո՞ւ է սա կարևոր ինձ համար

Այս հարցում մենք բոլորս միասին ենք: Օրակարգը՝ իր Կայուն զարգացման 17 նպատակներով, համընդհանուր բնույթ ունի և գործողությունների կոչ է անում բոլոր երկրներին՝ և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներին՝ ապահովելու, որ ոչ ոք չանտեսվի:

Որպես գործընկերներ՝ ի՞նչ է անհրաժեշտ անել Օրակարգն իրագործելու համար

Մենք կարիք կունենանք մոբիլիզացնելու թե՛ առկա և թե՛ հավելյալ ռեսուրսները՝ տեխնոլոգիաների զարգացում, ֆինանսական ռեսուրսներ, կարողությունների զարգացում, իսկ զարգացած երկրները հարկ կլինի, որ իրականացնեն զարգացման աջակցության իրենց հանձնառությունները: Բազմաթիվ շահագրգիռ կողմերի միջև գործընկերությունները կարևորագույն դեր կունենան Կայուն զարգացման նպատակների միջև փոխազդեցության լծակներ ստեղծելու համար՝ մեծացնելու դրանց արդյունավետությունն ու ազդեցությունը և արագացնելու Նպատակների հարցում առաջընթացը:

Ինչպե՞ս կարող ենք ապահովել անհրաժեշտ ռեսուրսների արդյունավետ մոբիլիզացումը և մոնիտորինգը

Սա լինելու է պետությունների հիմնական պարտականությունը: Յուրաքանչյուր երկրում անհրաժեշտ կլինի իրականացնել առաջընթացի կանոնավոր դիտարկումներ՝ քաղաքացիական հասարակության, գործարար հատվածի եւ շահագրգիռ տարբեր խմբերի ներգրավմամբ: Տարածաշրջանային մակարդակում երկրները կփոխանակեն իրենց փորձը և կլուծեն ընդհանուր խնդիրները, իսկ ամենամյա պարբերականությամբ ՄԱԿ-ում՝ Կայուն զարգացման բարձրաստիճան քաղաքական ֆորումի շրջանակներում, նրանք կքննարկեն ու կվերլուծեն առաջընթացը գլոբալ մակարդակում հայտնաբերելով բացթողումներն ու ի հայտ եկող խնդիրները և առաջարկելով ուղղիչ գործողություններ:

Ի՞նչ կարող ենք անել աջակցելու համար

Ձեր տեղական համայնքում ձևավորեք մի խումբ կամ միացեք գործող խմբի, որը ձգտում է մոբիլիզացնել ԿՁՆ-ների իրագործմանն ուղղված գործողությունները:

Խրախուսեք ձեր կառավարություններին՝ հանուն ԿՁՆ-ների իրականացման համագործակցել գործարար հատվածի հետ:

ԿՁՆ-ների վերաբերյալ ձեր նախաձեռնությունները գրանցեք ԿՁՆ-ների համագործակցության հարթակում՝ տեղեկացնելու, կրթելու, կապեր հաստատելու և ոգեշնչվելու նպատակով. <https://sustainabledevelopment.un.org/partnerships>.

Կայուն զարգացման նպատակների և 17-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>